

5 kn

2267

1999

ԱՆՋԱՆՔԻՍ

Գ Ի Շ Ե Ր

(ՕՍՏՐՕԳՕՐՍԿՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒԻԹ)



Թարգմաննց

Տիրուհի Կոստանեանց

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէ, Նիկի փ. ա. 21

1894

Լ.Ե.Ո
2267

ԵՆՃԱՆԳԻՒՍ

Գ Ի Շ Ե Դ

(ՇՍՏՐՕԳՕՐՍԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՅԹ)



Թարգմանեց

Տ Ի Ր Ո Ւ Կ Ի Կ Ո Ս Ս Ա Ն Ե Ն Կ Ա Ն Կ Ի Բ Ո Ւ Ն Ե



Ք Ֆ Խ Ի Ս

Տպ. Մ. Չարսաձեհի. || Կրթ. Մ. Սարաձե.

1894

42267-60

29 2270

1741.

Дозв. ценз. Тифлисъ, 26-го Апрѣля 1894 г.

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԳԻՂԵՐ



յն ժամանակ ես 15
տարեկան էի, իսկ
քոյրս 14: Մենք
թողինք այն սու-
նը, ուր երեխայու-
թիւնից ապրում
էինք և փոխուե-
ցինք մի հին ամ-
րոց, որ մայրս նոր էր
ժառանգութիւն
ստացել: Ամրոցը թէև հին էր, բայց ա-
ւերակի տեսք չուներ, որովհետև միշտ

կարգին էր պահուած: Ամբողջում միայն մէկ սենեակ անհոգ էր թողնուած, որովհետեւ ոչ ոք չէր համաձայնում նորան սարքել և ոչ ոք էլ չէր վճռում մինչև անգամ նորա շէմքի վերայ ոտք դնել: Լուր էր տարածուած, որ այդ սենեակում մարդ է ման գալիս գիշերները և թէև ոչ ոք չէր տեսել, թէ այնտեղ երևացողն ո՞վ էր, բայց շատերը կէս գիշերին ձայներ էին լսում և բացատրում էին միայն այսպէս թէ այդ սենեակում ուրուական է երևում: '՛հ հարկէ, ոչ ես և ոչ էլ քոյրս չէինք հաւատում այդ պատմութեանը և մինչև անգամ մեզ հետաքրքրում էր այդ սենեակը, որի հարևանն էինք: Մենք վճռեցինք ականջ դնել և տեսնել, թէ ինչ է կատարվում այնտեղ:

Մեր մայրիկը մեզանից առաջ էր գնացել ամբոյ: Երբ մենք էլ փոխուեցինք մեր նոր բնակարանը, մայրիկիս տեսնելուց ու համբուրելուց յետոյ, շտապեցինք ման գալ ամբոցի շուրջը և տե-

սանք, նորա ներքնայարկից սկսած մինչև վերնայարկը: Մայրիկս էլ մեզ տարաւցոյց տուեց ամբոցի ներսի կողմը և վերջապէս մտանք մէկ ընդարձակ ու լոյս սենեակ, որի պատուհանները նայում էին դէպի պարտէզ: Ամբողջ ամբոցում դամենից ուրախ սենեակն էր: «Այստեղ կըլինի ձեր ննջարանն, ասաց մայրիկս. յոյս ունիմ, որ կըհաւանէք: Մէկ բան լաւ չէ, բայց ես կարծում եմ, որ դուք դորա վերայ ուշադրութիւն չէք դարձնի, այն որ հէնց սորա վերայ է այն սենեակը, որի մասին այնքան սարսափելի բաներ են պատմում: Ես այնտեղ մտայ և ոչ մի առանձին բան չգտայ: Բայց այն սենեակը շատ անկարգ է և ես ծառաներից ոչ մէկին չկարողացայ համոզել, որ գնան և մաքրեն այնտեղ»: Մենք շնորհակալութիւն արինք մայրիկիս, որ մեզ համար այդ սենեակն ընտրեց և հաւատացրինք նորան, որ չենք վախենայ:

Բայց պէտք էր տեսնել մեր աղախ-
նի վախն ու զարմանքն, երբ իմացաւ,
որ մենք միշտ պէտք է այդ սենեակում
քնենք:

Բայց գիտէք տիկին, ասաց նա
մօրս, որ հէնց մեր գլխի վերևն է այն
սենեակը: Չարմանումեմ ձեր քաջու-
թեանը. եթէ ինձ երկու անգամ տ-
ւելի վարձ տայիք, ես դարձեալ չէի հա-
մաձայնի այս սենեակում քնել:

Մենք ծիծաղեցինք: Բայց ինչքն
ես վախենում, հարցրի ես նորան:

Ի՞նչպէս թէ ինչից. չէ՞ որ այն-
տեղ գիշերները մէկը ման է գալիս: (Բայց
թէ ո՞վ, նա չտասց, երևի մտածելով, որ
մենք ինքներս կըհասկանանք, որ այն-
տեղ մէկ սարսափելի մարդ է ման գալիս,
մեռել, ուրուական և կամ այդ տեսակ
մի բան:) Նա այնտեղ այնպէս աղմուկ է
բարձրացնում, որ կըտեսնէք, այս գիշեր
ձեզ չի թողնի քնելու:

ձայնը կամ մէկ կամ միւս կողմից էր
լսվում, բայց միևնույն ժամանակ նման
չէր մարդու քայլերին. այլ կարծես մէկը
յատակին կամ պատերին էր խփում և
անդադար մի բան էր քաշքշում սենեա-
կում:

Արդեօք այդ թնչ ձայն է, մտածում
էի ես. իսկ սիրտս սաստիկ բաբախում էր:
Ես չէի հաւատում ուրուականներին, բայց
միևնույն ժամանակ շատ ուրախ կըլինէի
այդ ըոպէին, եթէ հեռու գտնուէի այն
սենեակից, որտեղից ձայն էր լսվում: Ա-
մեն բան, ինչ որ պատմում էին այդ սե-
նեակի մասին, յանկարծ միտքս եկաւ: Ու-
զեցի վարթեցնել Ելիզային, բայց մտա-
ծեցի, որ այդ վատութիւն է իմ կողմից,
քանի որ նա ինձանից աւելի վախկոտ է:
Թէև շուտով նա ինքը զարթեց և ինձ
անկողնիս մէջ նստած տեսնելով, ան-
հանգիստ կերպով հարցրեց թէ թնչ է
պատահել: Ե՛լ կարելի չէր ճշմարտութիւ-
նը ծածկել:

Բայց պէտք էր տեսնել մեր աղախ-
նի վախն ու զարմանքն, երբ իմացաւ,
որ մենք միշտ պէտք է այդ սենեակում
քնենք:

Բայց գիտէ՞ք տիկին, ասաց նա
մօրս, որ հէնց մեր գլխի վերևն է այն
սենեակը: Ջարմանումեմ ձեր քաջու-
թեանը. եթէ ինձ երկու անգամ տ-
ւելի վարձ տայիք, ես դարձեալ չէի հա-
մաձայնի այս սենեակում քնել:

Մենք ծիծաղեցինք: Բայց ինչի՞ցն
ես վախենում, հարցրի ես նորան:

Ի՞նչպէս թէ ինչից. չէ՞ որ այն-
տեղ գիշերները մէկը ման է գալիս: (Բայց
թէ ո՞վ, նա չասաց, երևի մտածելով, որ
մենք ինքներս կը հասկանանք, որ այն-
տեղ մէկ սարսափելի մարդ է ման գալիս,
մեռել, ուրուական և կամ այդ տեսակ
մի բան:) Նա այնտեղ այնպէս աղմուկ է
բարձրացնում, որ կը տեսնէք, այս գիշեր
ձեզ չի թողնի քնելու:

Անհանգիստ մի լինիր, Սուսաննա,
պատասխանեցի ես. շատ լաւ կը քը-
նենք:

Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, դուք
այդպէս էք ասում, որովհետև չէք հա-
ւատում ուրուականներին: Ա՛յ, կը սպա-
սեմ ու կը տեսնեմ, թէ ինչ կը խօսէք
առաջին գիշերից յետոյ:

Ուղիղ է, ո՛չ մենք, ո՛չ էլ մայրիկս
չենք հաւատում ձեր հեքիաթներին. ին-
չո՞ւ էք զուր տեղը մարդկանց վախեց-
նում:

Ի՛նչ հեքեաթ. ամենքն էլ գի-
տեն և վախենում են մինչև անգամ ցե-
րեկով մօտենալ այն սենեակին. ո՞ւր մը-
նաց, որ գիշերը քնեն այնտեղ:

Մենք հէնց Սուսաննայից էլ իմա-
ցանք, թէ որտեղից պէտք է գնալ այն
սարսափելի սենեակը և նա հեռացաւ
թէ չէ, մենք քրոջս, Էլիզայի հետ գնա-
ցինք այն սենեակը: Համարեա՞ նախասե-
նեակի դռան առջևից շինուած էր մէկ

որորուն սանդուխք, այդ սանդուխքով մենք վեր բարձրացանք և տեսանք երկու դուռ. մէկը կիսաբաց էր, որտեղից երևում էր մի գատարկ ու մեծ սենեակ, իսկ միւսը փակ էր:

Մենք շատ տխրեցինք, փակած դուռը տեսնելով. այդպէս ուրեմն մեզ չի յաջողուի տեսնել այդ սենեակը, մտածում էինք մենք: Բայց մեր բաղդից էլիզան շուտով նկատեց դռան կողքից կախուած բանալին: Մենք այդ բանալիով փորձեցինք դուռը բանալ, բայց բանալին էլ, կողպէքն էլ այնպէս ժանգոտուած էին, որ շատ չարչարուեցինք, մինչև որ հասանք մեր նպատակին: Վերջապէս մենք ներս մտանք. այդ սենեակում կային երկու երեք աթոռ, երկու աթոռիկներ, մի հին սեղան, մահճակալ և մէկ բուխարի, որի առջևի վանդակը կոտրուած և միջից մի քանի կտոր աղիւս էր թափուած: Ահա և ամենն, ինչ որ կար այդտեղ: Կտուրից բացուած փոքրիկ պատու-

հանից թոյլ լոյս էր ընկել սենեակում և այդտեղ ամեն բան ծածկուած էր փոշիով ու սարգի ոստայնով:

Սենեակում երկար նայելու առանձին ոչինչ չկար: Մենք դուրս եկանք այնտեղից, կողպեցինք դուռը և բանալին կրկին կախեցինք իրան առաջուայ տեղը:

Մեր նոր տան մէջ առաջին գիշերն ինչպէս և երկրորդն ու երրորդը շատ հանդարտ անցաւ: Այդ բանը Սուսաննային շատ էր զարմացնում. նա ամեն առաւօտ գալիս էր մեզ մօտ, տեսնում էր մեզ ուրախ, հանգիստ և քներս լաւ առած: Երբ մենք ծիծաղելով ասում էինք նորան, թէ այս ո՛ւր է ձեր ուրուականը, նա խելօքացել է, թէ իւր բնակարանը փոխել է, Սուսաննան չէր վիճում մեզ հետ և միայն պատասխանում էր «սպասեցէք, սպասեցէք, մի շտապէք ծիծաղել և ուրախանալ»:

Մի քանի օրից լետոյ մայրիկս հի-

լանդացաւ. ես խնդրեցի նորան, որ նա ինձ թոյլ տայ գիշերն իրան մօտ մնալու և օգնելու, եթէ մի բան պէտք լինի: Բայց նա ասաց, որ իրան ոչինչ հարկաւոր չէ: Չնայելով որ մայրիկս ինձ այդպէս հաւատացնում էր, բայց ես դարձեալ չկարողացայ հանգիստ քնել. գիշերը ժամն երկուսին ես տեղիցս վեր թըռայ ու գնացի մայրիկիս մօտ. նա լաւ քնած էր: Ես շատ ուրախացայ և նորից վերադարձայ իմ սենեակս, սկսեցի կամաց կամաց շորերս հանել, որ Ելիզան չզարթի: Երբ ես պառկեցի ու աչքերս խփեցի, յանկարծ մի ինչ որ ձայն լսուեց: Ես նստայ անկողնիս մէջ և սկսեցի ալանջ զնել. ո՛չ մի ձայն, ծպտուն չէր լսվում: Երևի ինձ թուաց միայն, մտածեցի ես, երբ նորից ձայնը կրկնուեց: Դա այնպիսի մի տարօրինակ ձայն էր, որ դժուար թէ ես կարողանամ նկարագրել և հասկացնել: Կարելի էր կարծել, որ յիրաւի մէկն այնտեղ ման էր գալիս, որովհետև

ձայնը կամ մէկ կամ միւս կողմից էր լսվում, բայց միևնույն ժամանակ նման չէր մարդու քայլերին. այլ կարծես մէկը յատակին կամ պատերին էր խփում և անդադար մի բան էր քաշքշում սենեակում:

Արդեօք այդ Բնչ ձայն է, մտածում էի ես. իսկ սիրտս սաստիկ բաբախում էր: Ես չէի հաւատում ուրուականներին, բայց միևնույն ժամանակ շատ ուրախ կըլինէի այդ բոլորին, եթէ հեռու գտնուէի այն սենեակից, որտեղից ձայն էր լսվում: Ամեն բան, ինչ որ պատմում էին այդ սենեակի մասին, յանկարծ միաքս եկաւ: Ուզեցի զարթեցնել Ելիզային, բայց մտածեցի, որ այդ վատուածիւն է իմ կողմից, քանի որ նա ինձանից աւելի վախկոտ է: Թէև շուտով նա ինքը զարթեց և ինձ անկողնիս մէջ նստած տեսնելով, անհանգիստ կերպով հարցրեց թէ Բնչ է պատահել: Ե՛լ կարելի չէր ճշմարտութիւնը ծածկել:

«Սո՛ւս...» շշնջացի ես. լռէ...

Անցաւ մէկ րոպէ. նորից ձայնը կրրկ-
նուեց և կարծես պատին մի բան դի-
պաւ:

Ելիզան սաստիկ վախեցաւ և իմ
թեւիցս ամուր բռնեց: «Այդ այնտեղ, վե-
րևի սենեակումն է, ասաց նա ցած ձայ-
նով. ուրեմն ուղի՞ղ է, որ ասում էին թէ
այնտեղ ուրուականներ են ման գալիս:

Կատարի բաներ են, թնչ ուրուա-
կաններ. պատասխանեցի ես: Գնանք տես-
նենք, թէ այնտեղ ինչ է կատարվում.
մոմ վառենք:

Ո՛չ, ո՛չ, ի սէր Աստուծոյ չգը-
նանք, ասաց նա սարսափած. ո՛վ գիտէ,
թէ ինչ կըտեսնենք այնտեղ...

Հարկաւոր չէր, որ նա ինձ շատ
խնդրէր, որովհետև ես էլ այնքան քաջ
չէի: Վախենում էի և ուղիղն ասած կա-
մաչէի, եթէ Ելիզան Համաձայնէր ինձ
հետ վերև գնալ: Բայց ի հարկէ, ես նո-
րան այդ չասացի և իբր թէ ոչինչ չէր

պատահել, ես առաջարկեցի, որ գլուխ-
ներս վերմակով փաթաթենք և փորձենք
քնել:

Միւս առաւօտ մենք արդէն Հան-
գիստ կերպով էինք մտածում այդ գիշե-
րուայ մասին և ես սրտանց ծիծաղում
էի մեր վախկոտութեան վերայ: Բայց չէ՞
որ գիշերն իսկապէս մի տարօրինակ ձայն
էր լսվում, ասում էինք մենք միմեանց.
արդեօք թնչիցն է այդ առաջ գալիս,
թնչպէս իմանանք, թնչ անենք: Ամենից
լաւն էր գիշերով գնալ այն սենեակը և
տեսնել, թէ թնչն է, կամ ո՞վ է այդ
ձայնը հանողը. բայց մենք երկուսով շատ
կըվախենանք. պէտք է մէկին հետներս
տանել: Մայրիկս հիւանդ էր, ծառանե-
րից ոչ մէկը չէր համաձայնի այնտեղ
գնալ, այնպէս որ յոյսերս դրինք մեր
եղբօր, ժօրժի վերայ: Նա մեզանից ա-
ւելի փոքր էր, 13 տարեկան էր, բայց
նա իրան այնպէս քաջ էր ձևացնում և
այնպէս պարծենում էր, թէ տղամարդ է,

որ մենք վճռեցինք իսկոյն գտնել նորան
և հետը խօսել:

Ժօրժը շատ ոգևորուեց, լսելով մեր
պատմածը և նորա աչքերն ուրախութիւ-
նից փայլեցին:

Շատ լաւ, ասաց նա. հէնց այս
գիշեր կ'երթամ ուրուականներին հիւր-
ես կոտորտուել չեմ սիրում և երբ տես-
նեմ, որ նոքա ինձ սիրով չեն ընդու-
նում, կրբարկանամ ու մատս թափ կու-
տամ նոցա վերայ:

Իսկ մինչև այդ անելը, նա առա-
ջարկեց միասին գնալ վերև և տեսնել
թէ այդ ուրուականներն ինչ են արել
առաջին գիշերը: Ես և քօյրս փսփսալով
ու անհամարձակ գնացինք ժօրժի ետե-
ւից: Սենեակն էլի առաջուայ պէս էր.
կարասիքն էլ իւր տեղումն էր և ոչ մի
փոփոխութիւն չկար: Մեր վախն անցաւ.
սկսեցինք բարձր խօսել, ծիծաղել, մէկ
խօսքով մեզ բոլորովին հանգիստ էինք
զգում:

Յետոյ մենք երկար ժամանակ խօ-
սում էինք, թէ ինչ կերպ գիշերը գնանք
այդ սենեակը: Ամենից լաւն էր սենեակի
դուռը չկողպել, որ ժօրժը շուտով կա-
րողանայ ներս մտնել, երբ պէտք լինի:
Նա առաջարկեց մինչև անգամ դուռն
ուղղակի կիսաբաց թողնել, որ կարելի
լինի առանց ներս մտնելու նայել դրսից,
թէ ո՞վ կայ այնտեղ:

Բայց էլիզան միանգամայն հակա-
ռակ էր այդ բանին: Ի՞նչպէս, քո կար-
ծիքով պէտք է բոլոր դռները բանալ
ուրուականի առաջ, որ նա կարողանայ
ման գալ ամեն սենեակում. նա ի հարկէ
կ'ուրախանայ և ո՞վ գիտէ մեզ մօտ էլ
գայ հիւր. չէ, շատ շնորհակալ եմ:

Յիմար, եթէ նա ուզենայ, բա-
նալի ծակիցն էլ կարող է գալ քեզ պէս
վախկոտի մօտ ասաց ժօրժը:

Իսկ էլիզան պատասխանեց, որ նա
միայն այդպէս ասում է. բայց չի հաւա-
տում այդ բաներին:

Թէև ես նկատեցի, որ երբ մենք
ցած էինք իջնում սանդուխքից, Ելիզան
մեզանից ետ մնաց և բանալին այնպէս
պտրտացրեց, որ ծակը ծածկուի:

Այո ամբողջ օրը բացի մեր գիշերուայ
ճանապարհորդութիւնից, էլ բան գլուխ-
ներս չէր գալիս: Ժօրժը լուրջ կերպա-
րանք էր ստացել, կարծես թէ պէտք է
մի հրաշք գործէր: Վճռուած էր, որ այդ
գիշերը մենք չքնենք: Ժօրժն էլ պէտք
է սովորական ժամանակին գնար իւր սե-
նեակը. իսկ յետոյ, երբ բոլորը տան մէջ
քնէին, նա պէտք է զգուշութեամբ գար
մեր ննջարանը և մենք պէտք է ընթ-
րիք ուտէինք կէս գիշերին, որ ոյժ ու
քաջութիւն ունենայինք այդ մեծ գործի
համար: Այդ պատճառով ես խոհանոցից
ուտելու բաներ ուզեցի. պահարանում
դրի ու կողպեցի, որ Սուսաննան չնկա-
տէ մեր պատրաստութիւնները:

Յերեկով ամեն բան յաջող գնաց:
Գիշերուայ տասներկուսուկէսին ժօրժը մեր

դուռը ծեծեց. ներս բերինք նորան և
նստեցինք ընթրելու: Կարծես խօսք էինք
կապել ընթրիքն որքան կարելի է եր-
կարացնելու: Բայց վերջապէս ամեն բան
կերանք, պրծանք և մեզ մնում էր մի-
այն նստել ու սպասել: Անցաւ մէկ ժամ,
որը շատ ու շատ երկար էր երևում մեզ:
Մենք ականջ էինք դնում, թէ արդեօք
ձայն չի լսվում այն սենեակից. աշխա-
տում էինք անհոգ ու հանգիստ երևալ,
բայց ես համոզուած եմ, որ մեզանից
ամեն մէկն ուրախ էր սրտանց, որ ոչ
մի ձայն չէր լսվում... Մենք արդէն
ձանձրացանք և քներս սաստիկ տանում
էր. անդադար մէկս կամ միւսս յօրան-
ջում էինք շատ ախորժակով: Վերջապէս
Ելիզան չհամբերեց. «պարոններ քնելու
ժամանակ է, ասաց նա. էլ չեմ կարող
սպասել. երևի այսօր ոչինչ չի լինի»:

Եւ լանկարծ... լսուեց խշխշոց, յե-
տոյ էլ չրխկոց: Մենք վեր թռանք, Ելի-
զան գունատուեց: Առանց շարժուելու,

շունչերս բռներով, մենք լսում էինք այդ
ձայնը, որ մէկ սաստկանում, մէկ էլ յան-

կարծ կտրվում էր: Ժօրժն առաջինը խօսեց:
Ժամանակ է... գնանք, Ելիզա՛ս
մոմը տո՛ւր ինձ. երկուսդ էլ եկէ՛ք իմ
ետեւիցս և մի վախենաք. ասաց նա հաս-
տատ ձայնով: Բայց ինձ թւում էր, որ
նա էլ մի քիչ գունատ էր:

Ի՞նչպէս թէ մենք էլ հետզ գանք,
ասաց Ելիզան. ես կարծեցի թէ գու մե-
նակ կ'երթաս:

Ոչ, գնանք բոլորս միասին. ես
չեմ վախենում. կարող եմ և մենակ գը-
նալ, բայց միասին աւելի ուրախ կըլինի:

Լաւ ուրախութիւն է... մենակ
գնա՛, եթէ չես վախենում. ես չեմ գայ,
չեմ գայ, շարունակ կրկնում էր Ելիզան:

Ես կըզամ քեզ հետ, ժօրժ. ա-
սացի ես, տեսնելով որ մեր հերոսն էլ
կարօտ էր օգնութեան:

Ժօրժն առաւ մոմն ու գնաց. ես
էլ նորա ետեւից: Ելիզան մեզ հետ եկաւ

մինչև սանդուխքն ու այնտեղ էլ մնաց:
Ես ու ժօրժը զգուշութեամբ վեր բարձ-
րացանք. ձայնն աւելի ու աւելի պարզ
էր լսվում: Սանդուխքի գլխին ես կանգ-
նեցի ու նայեցի ժօրժի վերայ, ժօրժն էլ
ինձ նայեց. խոստովանում եմ, որ թէև
ես գողգողում էի վախից, բայց քիչ մը-
նայ թէ ծիծաղէի, երբ տեսայ ժօրժի ե-
րեսը: Մեր հերոսի երեսին հետաքրքրու-
թիւն ու վախ էր երևում և միևնոյն
ժամանակ նա աշխատում էր վճռողա-
կան և համարձակ քաջի տեսք ունենալ:

Ա՛խ, գրողը տանի՛, մոռացայ
փայտս հետս առնել. փնթփնթում էր
նա: Ելիզա՛ս, սիրելիս, ասաց նա շատ ցածր
ձայնով, իջնելով սանդուխքի մի երկու
աստիճանը. խնդրում եմ բեր քո ամպհո-
վանին, կամ մէկ որևէ երկար փայտի կտոր:

Ինչո՞ւ համար. գու նորան փայտով
բ՛նջ կարող ես անել... թէև սպասէ, ես
իսկոյն կըբերեմ:

Եւ նա քաշքշելով բերեց կրակխառ-

նիչը և ներքևում կանգնած, տուեց ժոր-
ժին: Ելիզան չէր կարող աւելի առաջ
գալ և վախից դողդողում էր:

Ժորժը տեսնելով որ լաւ գէնք ու-
նի, կարծես աւելի քաջացաւ: Նա մօ-
տեցաւ դռանը և կիսով չափ, կամաց
բացեց. ես կանգնած էի նորա ետևը:

Լուսնի փայլից սենեակն այնքան
էլ մութը չէր. մենք ներս նայեցինք, ոչ
ոք չկար այնտեղ: Ժորժը դուռը բոլո-
րովին բացեց և ներս մտանք. շէմքից
մի քանի քայլ առաջ գնալով, ես ժորժի
ձախ ձեռքից բռնեցի, լիշելով որ աջ
ձեռքը պէտք է ազատ թողնել, կրակ-
խառնիչով կռուելու համար:

Սենեակում բաւական լոյս կար. կա-
րասիքն ու ամեն բան իրանց տեղումն
էին: Մեր քաջութիւնն եկաւ և երկուսս
էլ գնացինք մինչև սենեակի մէջ տեղը.
չորս կողմերս նայելով, մենք ոչ մի զար-
հուրելի բան չտեսանք այնտեղ:

Ե՛հ, եթէ այնտեղ ուրուական-

ներ կան, ասաց ժորժն, ուրեմն նոքա
թագնուել են և մենք էլ ոչինչ չենք
կարող անել:

Եւ նա սկսեց կրակխառնիչը թափ
տալ օդի մէջ, երևի դորանով ուզեց ցոյց
տալ, թէ նա ինչպէս կրկուրի ուրուա-
կանների հետ, եթէ նոքա դուրս գան:

Հէնց այդ ժամանակ ինձ թուաց, թէ
բուխարու խորքում մէկ բան շարժուեց.
Ես այն կողմը նայեցի և տեսայ, որ այն
տեղից ուղղակի մեզ վերայ երկու մեծ,
փայլուն աչքեր են նայում: Ժորժի ձե-
ռից քաշելով, ես կարողացայ միայն շը-
շընջալ.

Ժօրժ:.. տեսնում ես...

Ժորժը նայեց բուխարու մէջ և տե-
սաւ նոյն բարկացած և մեզ վերայ նա-
յող սուր աչքերը:

Մենք այդ բոլորովին չէինք սպա-
սում: Մի անգամից դուրս պրծանք դըռ-
նից և գլորուելով ու շնչասպառ ցած
իջանք սանդուխքից և քիչ մնաց որ է-

լիզային էլ ստքերիս տակն առնէինք, որը նստել էր սանդուխքի առաջին աստիճանին: Նա դեռ չգիտէր, թէ մենք ինչիցն ենք վախեցել, բայց երևի ամեն տեսակ զարհուրելի բան սպասում էր, որովհետև մեզանից աւելի շուտ ընկաւ մեր ննջարանը: Այնտեղ միայն, երբ դուռն ամուր փակեցինք, նա մի քիչ սիրտ առաւ, հարցրեց մեր փախչելու պատճառը և նկատեց, որ մենք երկուսս էլ կրի նման սպիտակել ենք: Ես բոլորովին ոյժ չունէի պատասխանելու: Ժօրժը նորան պատմեց ամեն բան և զգալով որ փախչելն ամօթ էր, նա բոլոր մեղքն ինձ վերայ գցեց:

Մարիամը խանգարեց. ինքը վազեց դժի նման, ինձ էլ հետը քաշում էր: Բայց ճշմարիտ, ես գլուխս կըտայի, եթէ կարողանայի տեսնել, թէ ո՞ր լիմար երեսի վերայ են այդ աչքերը:

Այդ խօսքերից ես նեղացայ.

Հիմայ քեզ ո՞վ է խանգարում.

գնան, տես. իսկ մենք այստեղ կըսպասենք:

Այդ ժամանակ նորից աղմուկ լսուեց, բայց շատ տարօրինակ էր. մենք բոլորս էլ վեր թռանք: Դա կարծես մի տեսակ հառաչանք էր, որը ոչ թէ շարունակվում էր, այլ խուլ կերպով կտրվում էր: մենք սկսեցինք ականջ դնել. ձայնը կըրկնուեց երկրորդ և երրորդ անգամ:

Աղախնին պէտք է կանչել, ասաց էլիզան. ես վախենում եմ այստեղ մնալ և նա մօտեցաւ, որ զանգահարէ, բայց ժօրժը նորա ձեռքից բռնեց:

Չզանգահարես, ես դեռ կընայեմ, թէ ո՞վ է այնտեղ:

Ժօրժի երեսիցն երևում էր, որ նա արդէն հաստատ վճռել էր գնալ այն սենեակն էլի մէկ անգամ:

Ի սէր Աստուծոյ ժօրժ, չգնաս, ասացինք մենք երկուսս: Սպասէ մինչև առաւօտ և այն ժամանակ պարտիզպանին էլ հետդ տար: Հիմայ թնջ հարկաւոր է այնտեղ գնալ. ով գիտէ, թէ ինչ

կարող է պատահել:

Ոչ, ես կ'երթամ, վճռողական ձայնով ասաց նա. մի վախենաք, ես կին չեմ և եթէ մի բան պատահի, ես ինքս ինձ պաշտպանել կրկարողանամ: Այստեղ մնացէք, եթէ պէտք լինի, ես ձեզ կրկանչեմ:

Նա մոմն առաւ ու գնաց. նորա առաջուայ վախը բոլորովին անցել էր. մենք էլ գնացինք նորա ետեւից: Նա համարձակ վեր բարձրացաւ և առանց կանգնելու ուղղակի սենեակ մտաւ: Մենք մնացինք սանդուխքի մօտ:

Մեր սրտերը թրթռում էին, մինչև որ ականջ էինք դնում, թէ ինչ էր կատարվում այն սենեակումը: Անցաւ մէկ, երկու րոպէ: Յանկարծ, ժորժը ճչաց և լետոյ էլ մի ինչ որ ձայն լսուեց: Մենք հասկացանք, որ ժորժը մէկի հետ կրկնում էր և այդ կռիւն այնքան էլ հեշտ չէր: Ժամանակը շատ երկար էր թւում և եղբօրս համար անհանգիստ էինք:

Արդեօք քեզ օգնելու չգանք, հարցրի ես:

Հարկաւոր չէ, պատասխանեց ժորժը: Մէկ ուրուականն իմ ձեռքումս է, իսկ միւսը մտաւ էլի բուխարու մէջ:

Այս խօսքերով ժորժն երևաց սենեակի շէմքի վերայ, կուրծքին սեղմած մի մեծ բու:

Այն, այն ուրուականը, որ մեզ այնքան անհանգստութիւն պատճառեց, ասաց նա ծիծաղելով: Եւ ինչպէս լիմարն եմ ես, որ միանգամից չկարողացայ հասկանալ, թէ ո՞վ էր այդ աղմուկ հանողը մեր գլխի վերևը: Ի՞նչ էր այդ գողին բռնեցինք. դուք ասէ՛ք թէ ինչ անենք սորան:

Գիտես ինչ, մտածեցի ես զայնք սորան զամբիւղի մէջ. և ես իսկոյն դնաւ-՞ յ. ցի բերի մէկ մեծ զամբիւղ, նորան դրինք մէջն ու տարանք վեր:

Ժորժը մեզ ասաց, որ բուերը մկներ շատ են սիրում և երևի ձայնն այն ժա-



մանակ էր բարձրանում, երբ բուն իւր ընկերի հետ միասին մուկ էին որսում:

Այդ ամենը լաւ, բայց ժօրժ, դու գիտես, որ շատ քաջ ես. քո տեղը որ ուրիշը լինէր, դժուար թէ մենակ գար այս սենեակը:

Ե՛հ, քօյրիկ ջան, խոստովանանք լինի, ես էլ սկզբում շատ էի վախենում, բայց երբ այն հառաջանքը լսեցի, հաստատ համոզուեցի, որ այստեղ բուեր կան. այդ ձայնն ինձ շատ լաւ ծանօթ է: Եւ այդպէս էլ եղաւ. երբ ես ներս մտայ, պարոն բուն նստել էր մահճակալի գլխին; իսկ տիկին բուն արդէն բուխարու մէջն էր թաղնուել. երևի այնտեղ նոցա բոյնն է: Մտածելով, որ պ. բուն էլ կ'երթայ նորա մօտ, ես վազեցի և կանգնեցի բուխարու առաջը: Յիրաւի, բուն վազեց դէպի այն կողմը, որտեղ որ ես կանգնած, սպասում էի նորան գրկաբաց: Հէնց այդտեղ էլ սկսուեց մեր կռիւը. մի երկու անգամ նա իւր կտուցով ինձ կտցեց,

բայց ես յաղթեցի: Իսկ հիմայ, սիրելի քօյրիկներս, ժամանակ է հանգստանալու, թո՛ղ քունը մեզ վարձատրէ այս գիշերուայ չարչարանքի համար: Միայն առաջուց խօսք տանք միմեանց, որ ոչ ոքի բան չասենք. ես մեծ հանդէս պէտք է սարքեմ:

Մենք շատ լաւ քնեցինք մնացած գիշերը: Առաւօտն երեքս միասին դարձեալ գնացինք վերի սենեակը: Առաջին բանը, որ մեր աչքին ընկաւ, այդ տ. բուն էր, որ կանգնել էր իւր գերի ընկած ամուսնու զամբիւղի վերայ: Նա ինչպէս բարի ընկեր, գտել էր իւր կորցրած ընկերոջը և աշխատել էր նորան մօտիկ լինել: Մեզ նկատելով, նա վազեց դէպի բուխարին, բայց ժօրժը նորան բռնեց և նոյնպէս դրեց միւսի կողքին. զամբիւղն արձակ էր, երկուսի համար էլ բաւական տեղ կար, այնպէս որ մենք մանրամասն զննում էինք մեր գերիներին: Բուերը ջահել, բայց մեծ էին: Մենք

զամբիւղը դրինք սեղանի վերայ, սենեակի մէջ տեղը և ծածկեցինք մահուգով, որ լոյսը մեր բուերին չխանգարէ. որովհետև յայտնի է, որ գիշերուայ թռչունները ցերեկը լոյս չեն կարող տեսնել:

Ես չեմ կարող նկարագրել այն վախն ու սարսափն, երբ ժօրժը Սուսանային պատմեց, թէ ինչպէս մենք գիշերս աղմուկ լսեցինք վերի սենեակից և թէ ժօրժը մենակ գնաց այնտեղ ու պատերազմեց ուրուականների հետ:

Ո՛հ, պարոն ժօրժ, այդ ինչպիսի քաջութիւն է: Ճշմարիտ, ես զարմանում եմ, թէ ինչպէս դորանից լետոյ դուք դեռ էլի կենդանի մնացիք: Ոչ, ես չեմ կարող այնպիսի տան մէջ մնալ, որտեղ այս տեսակ սարսափելի բաներ են պատահում. ես ինձ համար ուրիշ տեղ կըճարեմ:

Հանդստացէք Սուսաննա, հիմայ ուրուականներն էլ ձեզ չեն անհանգստացնի. ես յաղթեցի նոցա. հիմայ նոքա

իմ գերիներս են. ուզում էք ցոյց տամ ձեզ:

Վայ, վայ, ինչ էք ասում. մի՞թէ կարելի է այդպիսի բան մտածել: Ես մեռնել չեմ ուզում, իսկ երբ մարդ ուրուական տեսնի, հէնց այն ժամանակ նորա վերջը կըգայ:

Ե՛հ, ինչ երեխայութիւն է, Սուսաննա, ես խօսում եմ, թէ և՛ ոչ մի այն տեսայ, այլ և կռուեցի ուրուականի հետ:

Բայց Սուսաննան յամառուեց և ոչ մի կերպ չէր համաձայնում գնալ տեսնել նոցա:

Հազիւ հազ նա համաձայնեց գնալ վերև, այն էլ խոհարարուհու հետ. դեռ հարկաւոր էր գնալ խոհարարուհուն էլ համոզել: Վերջապէս ամեն բան սարքուեց և մենք բոլորս միասին վեր բարձրացանք:

Ժօրժը մեր առաջն ընկած գնում էր, մի հաստ չով ձեռքին, որ հանել էր մեծ աւելից. այդ ժօրժին քաջ զինուորի տեսք էր տալիս և հէնց դորանից ծա-

ուաները կարծում էին, թէ գուցէ ուրուականը պէտք է զարհուրելի բաներ անէ, որ պարոնը ձեռքին շատ հաստ ճիւղոտ է վերցրել նոցա հետ կռուելու համար: Միայն ես և Ելիզան գիտէինք, որ ժօրժը այդ հաստ չոփի կտորը պէտք է զամբիւղի ծակերից ներս կոխէ, որ բուերը կարողանան թառել նորա վերայ:

Ժօրժին հետևում էինք ես և Ելիզան, մեր ետևից գալիս էր խոհարարուհու աղջիկը, որն ինքն ուղեց տեսնել այդ հրաշքը. իսկ ամենավերջը գալիս էին ձեռք ձեռքի տուած Սուսաննան և խոհարարուհին: Երկուսն էլ դեղնել էին վախից:

Երբ ժօրժը սենեակի դուռը բացեց, նոքա երկուսն էլ չէին վճռվում ներս մտնել և շէմքի վերայ կանգնած մնացին: Ժօրժը վախեցրեց, որ եթէ նոքա ներս չմտնեն, ուրուականներին բաց կը թողնի և միայն այդ ժամանակ նոքա շէմքից անցան:

Բայց նոցա վախը դեռ էլի չանցաւ

և անհանգիստ կերպով նայում էին մահուաբի վերայ, տակը ծածկուած էին սարսափելի ուրուականները: Ժօրժը կանգնեց սեղանի մօտ և սկսեց այսպիսի ճառ.

«Տիկիներ, ամէնից առաջ ես ձեզ կըխնդրեմ, շատ չվախենաք այն տեսարանից, որ ես պատրաստվում եմ ցոյց տալ ձեզ 'ի հարկէ, արդէն յայտնի է, որ այս տան մէջ մի տարօրինակ ձայն էր լսվում. ուրուականներն այս սենեակը յափշտակել էին: Ես բաղդ ունեցայ այս հին ամրոցն ազատել վատ հիւրերից. երէկ ես թունդ կռիւ ունեցայ նոցա հետ և կարող եմ պարծենալ, որ յաղթեցի: Հիմայ ուրուականներն իմ գերիներս են և ես նոցա էլ ազատ չեմ թողնի: Ես ձեզ հրաւիրեցի այստեղ տիկիներ. որ ցոյց տամ մեր բոլորիս թշնամիներին: Ահա՛ նոքա, որ առաջ դարհուրելի ուրուականներ էին»:

Այո խօսքերից յետոյ նա ճարպիկութեամբ մահուադն ետ տարաւ և ցոյց

տուեց բուերին, որոնք զամբիւղի մէջ
կուչ եկած, նստել էին

Հէնց որ ժորժը ձեռքն երկարացրեց
դէպի մահուգը: Սուսաննան «անխ» քա-
շեց, իսկ խոհարարուհին սկսեց աղօթք
մըմնջալ և չվերջացրեց աղօթքը...

Մէկ րոպէ լռութիւն տիրեց:

Այս է բոլորն, ասաց խոհարարու-
հին, կարծես դժգոհ էր, որ ամէն բան
աչդպէս հասարակ կերպով վերջացաւ:

Է՛հ, փնռք Աստուծոյ, ասաց Սու-
սաննան. ես շատ ուրախ եմ որ ուրուական-
ները միայն հասարակ բուեր դուրս եկան:

Իսկ խոհարարուհու աղջիկը ծիծա-
ղեց: Շուտով ամբողջ տունն իմացաւ մեր
պատմութիւնն ու քաջութիւնը: Ժորժը
սկսեց սովորեցնել բուերին և նոքա շու-
տով ընտանի դառան:



«Ազգային գրադարան»



NL0359075

Նոյն թարգմանչինն է

	Ո.	Կ.
1. Յովհան Գուտտէնբերգ . . .	—	15
2. Դօքտօր Ջէններ . . .	—	20
3. Մանկական թատրոն . . .	1	—
4. Իբսէնի, Նօրա . . .	—	30
5. Լիբ Արբայ. . .	—	5
6. Գայլ. . .	—	3
7. Թուղթ և չին Դրքեր (Օստրօ- գօրսկի) . . .	—	5
8. Տիրօլացի Աղջիկ և Ժլատ . . .	—	5
9. Մեր Պապի Գաւազանը. . .	—	5



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

